

ԱՌԱՋԱՐԿ

2011-2013 թթ ԶԳ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կրթության և գիտության նախարարության հայտում «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագիրն ընդգրկելու և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ին այդ նպատակով դրամաշնորհ (լրացուցիչ ֆինանսավորում) հատկացնելու

1. Իրավական հիմքերը

ԶԳ 2009-2011թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում, որպես հանրակրթության օժանդակության ծառայություններ, ընդգրկված է «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» («Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում», «Պատանի ստեղծագործողի և հետազոտողի հեռակա հանրապետական դպրոց», «Պետական այլընտրանքային մանկավարժական ծրագրերի իրականացում») ծրագիրը, որի իրականացման համար նախատեսված են պետական դրամական հատկացումներ կրթահամալիրին՝ 2010-2011թթ: Դրամաշնորհը հատկացված է հանրակրթական ուսուցման որակի, մատչելիության և տնտեսության արդի պահանջներին համապատասխանության բարելավման համար: ՄԺԾ ծրագրում արձանագրված են ծրագրի ոչ ֆինանսական և ֆինանսական ցուցանիշները: 2010թ. ԶԳ պետական բյուջեով կրթահամալիրին հատկացված է դրամաշնորհ 94,34 մլն. դրամ «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի իրականացման համար: Կրթահամալիրը սահմանված կարգով ԿԳ նախարարության հետ կնքել է պետական աջակցության պայմանագիր ծրագրի իրագործման համար: Պետական աջակցության Ա-6/20 պայմանագրով որոշված՝ ծրագրի 2010թ. աշխատանքի բովանդակությունը կցվում է (հավելված): ԿԳ նախարարը 2006թ. դեկտեմբերի 1-ին կրթահամալիրի տնօրենի հետ կնքել է աշխատանքային պայմանագիր (գործողության ժամկետը 2011թ. դեկտեմբերի 2), որով կրթահամալիրի տնօրենը «պատասխանատու է Գործատուի որոշած՝ կրթահամալիրում՝ որպես Գործատուի փորձարարական-հետազոտական միավորում, իրականացվող մանկավարժական գիտափորձերի, կրթահամալիրի զարգացման ծրագրի և դրա շրջանակում կրթահամալիրի դասավանդողների կողմից մշակվող և փորձակվող հեղինակային ծրագրերի, պետական աջակցությամբ իրականացվող «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում», «Պատանի ստեղծագործողի և հետազոտողի հեռակա հանրապետական դպրոց», «Պետական այլընտրանքային մանկավարժական ծրագրերի իրականացում», «Ներառական ուսուցումը հանրակրթական դպրոցում» ծրագրերի իրականացման համար»: 2009թ. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը «Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության» շրջանակներում 94.360 մլն. դրամ պետական աջակցություն է ստացել «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի իրականացման համար, որի հաշվետվությունը սահմանված կարգով ներկայացվել է ԿԳ նախարարություն: 2009թ. ԶԳ պետական բյուջեով որոշված ֆինանսական ցուցանիշները՝ կատարված, իսկ ոչ ֆինանսականները նաև գերազանցված են:

2009թ. հուլիսի 10-ին ընդունված Հանրակրթության մասին ՀՀ օրենքը սահմանում է. «**հանրակրթական ծրագիր** (հիմնական և լրացուցիչ)՝ հանրակրթության նպատակների իրականացմանն ուղղված ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջություն» (հոդված 3, կետ 6), «պետական կառավարման լիազորված մարմինը մշակում և հաստատում է հանրակրթական պետական ծրագրերը, հանրակրթական այլընտրանքային, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային հիմնական ծրագրեր, որոնք չեն հակասում հանրակրթության պետական չափորոշիչին» (հոդված 7, կետ 6): ԿԳ նախարարության հավանությանն արժանացել է կրթահամալիրի խորհրդի հաստատած կրթահամալիրի 2009-2012թթ զարգացման ծրագիրը: Այս ծրագիրը զարգացման ծրագրի բաղկացուցիչն է: Հանրակրթության մասին ՀՀ օրենքով՝ «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը՝ ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը» (հոդված 2, կետ 5 (4)):

2. Իրավիճակի նկարագրությունը

2009թ. ընթացքում զգալի ավելացել է համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովված դպրոցների քանակը: ՀՀ 2010 թ. պետական բյուջեով ԿԳ նախարարությանը ավագ դպրոցների ցանցի ներդրման համար հատկացվել է 159,6 մլն դրամ, ԿՏԱԿ-ին՝ 697,951.3 մլն.դրամ հանրակրթական դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակազմային սարքավորումների պահպանման համար:

Պետական աջակցությամբ իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացումը հանրակրթությունում» ծրագրի իրագործման արդյունքում այսօր ունենք նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերի, սովորողի ընդհանուր և նախասիրությունների, լրացուցիչ կրթության, հետազոտական և շարունակական կրթական հմտությունների զարգացման, մասնագիտական ուսուցման, ուսուցիչների անընդհատ մասնագիտական զարգացման արդյունավետ և մատչելի համակարգ, որի բարելավումը, որպես մոդել՝ նրա բաղադրիչների տարածումը օգտակար կլինի հանրապետության կրթական համակարգի համար: Հանրապետությունում ձևավորվում է ինքնուրույն ավագ դպրոցների ցանցը: «Կրթության որակ և համապատասխանություն» Համաշխարհային բանկի 2-րդ վարկային ծրագրով նախատեսվում է 120-ից ավելի նախակրթարաններ բացել հանրակրթական դպրոցի կազմում: Այս գործընթացը ՄԺԾ Ժամանակահատվածում ստեղծելու է հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների նոր համամասնություն: Արդյունքում առաջանում են տարբեր կրթական ծրագրեր իրականացնող նոր տիպի հաստատություններ (տարրական դպրոց-մանկապարտեզ, հիմնական դպրոց-մանկապարտեզ, կրթահամալիր, ինքնուրույն հիմնական և ավագ դպրոցների ցանց): Միջին դպրոցի հինգամյա ծրագիրը կարող է տրոհվել երկու ենթածրագրի՝ 5-6-րդ դասարաններ, որը կարող է իրագործվել նաև ինքնուրույն

տարրական դպրոցում, և 7-9-րդ դասարաններ, որը կարող է իրականացվել նաև ավագ դպրոցում: Հանրակրթության բարեփոխումների բնականոն այս ընթացքին անպատրաստ լինելը խոչընդոտ է դառնում ուղորտի զարգացմանը:

Դպրոցների համակարգչայնացումն ու դասավանդողների համակարգչային ունակությունների զարգացումը արդյունավետ չեն լինի առանց հանրակրթական պարտադիր առարկաների և սովորողի ընտրությամբ դասընթացների այլընտրանքային (գլխավորապես ՏՀՏ կիրառմամբ) նոր ծրագրերի ներդրման, որին մեծապես խոչընդոտում է ՏՀ նոր տեխնոլոգիաների չտիրապետող ուսուցիչը: Նոր պայմաններում կարևոր են դառնում մեդիա կրթությունը, օտար լեզուների կիրառությունը, ՏՀՏ կիրառմամբ ուսումնական ծրագրեր և այլ նյութեր ստեղծելու կարողությունը: Կրթահամալիրի կրտսեր դպրոց-պարտեզում իրականացվում է «Իմացումի հրճվանք» ծրագիրը, օտար լեզուները, համակարգիչն ու ինտերնետն ուսուցանվում և գործածվում են առաջին դասարանից, 1-4-րդ դասարաններում ապահովվում են օտար լեզուների ամենօրյա պարապմունքներ: 2009թ. կրթահամալիրի միջին և ավագ դպրոցներում ռուսերենից և անգլերենից բացի, սովորողների ընտրությամբ խորացված ուսուցանվում են նաև ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, արաբերեն, վրացերեն: ՀՀ կառավարության հաստատած «Ավագ դպրոցների ստեղծման ռազմավարական ծրագրով» նախատեսված է «ստեղծել սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղության, այդ թվում՝ նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն: Այդ նպատակով ավագ դպրոցի կրթական ծրագիրը դարձնել ճկուն՝ հնարավորություն ստեղծելով արձագանքելու աշակերտների կրթական պահանջունքներին և նախասիրություններին: Հիմնական կրթության այն շրջանավարտները, որոնք չեն ձգտում բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ստանալ, կամ չեն ունեցել բավարար առաջադիմություն հիմնական դպրոցում, պետք է հնարավորություն ունենան ստանալու գոնե նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, միաժամանակ չկորցնելով միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունը, կամ ուսումը շարունակել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ավագ դպրոցի շրջանավարտների որոշ մասը չի կարողանա կամ չի ցանկանա շարունակել կրթությունը բուհում: Նրանց այլընտրանքը կարող է լինել միջին մասնագիտական կրթությունը կամ ելքը դեպի աշխատանքի շուկա: Նկատի ունենալով, որ միջին մասնագիտական կրթության ծավալները սահմանափակ են, ավագ դպրոցը *պետք է ապահովի նաև որոշակի նախնական մասնագիտական պատրաստվածություն»*: Կրթահամալիրի՝ ՀՀ կառավարության 664-Ն որոշմամբ (11 հունիսի 2009) ստեղծված երեք ինքնուրույն ավագ դպրոցներում, ներդնելով հեղինակային մանկավարժության ծրագրի շրջանակում 2006-2008թթ իրականացված «Հանրակրթության և մասնագիտական կրթության ներառում» գիտափորձի արդյունքները՝ մշակվում և փորձարկվում է ռազմավարական ծրագրին համապատասխան ուսումնական բովանդակություն: Կրթահամալիրի կազմում գործող քոլեջը հնարավորություն է տալիս մշակելու և փորձարկելու ինքնուրույն ավագ դպրոց – միջին մասնագիտական կրթություն անցման մեխանիզմը:

Թվային տեխնիկական միջոցները կրթահամալիրում թե տանը գործածվում են որպես կրթության արդյունավետ գործիքներ: Մայքրոսոֆթի երևանյան գրասենյակի աջակցությամբ ներդրվել է Live & Edu

փոստային համակարգը, որը միավորում է կրթահամալիրի բոլոր աշխատողներին և սովորողներին (նրանց ծնողներին), ապահովում է արագ և արդյունավետ հաղորդակցում: Ծրագրի իրականացման արդյունքում կրթահամալիրում իրականացում են ամենամյա միջազգային հունվարյան «Թվային տեխնիկական միջոցները կրթության արդյունավետ գործիքներ» ստուգատեսը և հունիսյան մեդիափառատունը: 2009թ. կրթահամալիրում ցուցադրվել են ուսումնական աշխատանքի արդյունք մոտ 800 մեդիանյութեր:

Կրթահամալիրում ոչ միայն «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության մեջ, այլ նաև սովորողների ընտրությամբ գործունեությունների ցանկում ի թիվս մյուսների ներառված են կենդանիների, բույսերի խնամքը և բուծումը, անվտանգ երթևեկության հմտությունների յուրացումը, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի, ռոբոտատեխնիկայի և տեխնիկական այլ ստեղծագործական, դիզայներական-գրաֆիկական, մոդելավորման աշխատանքները, խոհարարական աշխատանքը և այլ արհեստները: Տեխնոլոգիական հմտությունների յուրացումը խթանվում է դրա արդյունքը կյանքում՝ ծեսերի, տոների, կրթահամալիրային այլ միջոցառումների ժամանակ կիրառելու միջոցով: Տարվա մեջ մի քանի անգամ համապատասխան տոնական ցուցադրությունների, ցուցահանդեսների, նոր ոճի ցուցադրությունների, կրթահամալիրային միջոցառումների ժամանակ ամփոփվում են այս ուղղությամբ աշխատանքի արդյունքները:

Անհատական համակարգչով և ինտերնետային կապով ապահովված ուսուցիչների (գրեթե բոլորի) և սովորողների (մեծ մասի) նոր համագործակցությունը, անցած տարում ներդրված ՏՀՏ տասնմեկ նոր մոդել կաբինետները ուսուցման նոր կազմակերպում են առաջարկում: Գրատախտակն իր տեխնիկական և ծրագրային լուծումներով հնարավորություն է տալիս դասավանդողին սովորողների մոտիվացիան բարձրացնելու, ուսուցումն ավելի արդյունավետ կազմակերպելու, անհատական և խմբային աշխատանքները ներկայացնելու հարցերում: Գրատախտակի առավելությունները վառ արտահայտվեցին 2010թ. հունվարի 20-23 կրթահամալիրում անցկացված «Թվային տեխնիկական միջոցները՝ արդյունավետ կրթության գործիքներ» միջազգային ստուգատեսի ընթացքում: Կրթահամալիրում արդեն անհրաժեշտություն է դարձել այդպիսի գրատախտակի առկայությունը յուրաքանչյուր դասասենյակում, լաբորատորիայում և արհեստանոցում: Կրթահամալիրում արդեն ստեղծվել են այդպիսի երեք դասասենյակներ, որտեղ կրթահամալիրը և ծնողները պայմանավորվել են հավասար չափաքանակներով վճարել տեղնիկայի համար: «ԱԼՖԱ» ֆիրմայի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն տեխնիկայի համար վճարումը չորս ամսում կատարելու մասին: Ծնողների հետ կնքվել են պայմանագրեր՝ չորս ամսվա ընթացքում վճարումները կատարելու մասին: Դասավանդողների և սովորողների կողմից համակարգչային ծրագրերի տիրապետումը և մշտական կիրառումը անհրաժեշտություն է դարձրել նաև ուսումնական համակարգիչը (նոտբուքը) յուրաքանչյուրի ուսումնական միջոցը դարձնելը: Կրթահամալիրի էլեկտրոնային կայքը՝ որպես ուսումնական միջավայր, դարձել է ավելի գրավիչ, քանի որ առավել մեծ թվով սովորողներ և ուսուցիչներ են մասնակցում կայքի ստեղծմանը, ավելի շատ է այն կիրառվում ուսումնական գործունեության ժամանակ: Աշխատանքի զարգացումը հանգեցրել է ուսումնական ինտերնետ-TV, բազմալեզու լրատվական գործակալություն,

ուսումնական ինտերնետ-ռադիո (այդ թվում մեդիաթատրոն) ստեղծելու ծրագրերին: «Դպիր» և «Նախակրթարան» մանկավարժական ամսագրերը մեծ թվով հետազոտական և թարգմանական աշխատանքների պատվիրատու դարձան. թարգմանվել-հրատարակվել են հայտնի մանկավարժ-տեսաբանների երկեր, մեթոդական մշակումներ, այլ երկրների մանկավարժական փորձը ներկայացնող հոդվածներ, գրական ստեղծագործություններ, կրթահամալիրի ուսուցիչների մեթոդական մշակումներ և նրանց ստեղծած ուսումնական նյութեր: 2009թ. կրթահամալիրի կրտսեր դպրոցներում և նախապատրաստական խմբերում լողուսուցումը և մարմնամարզությունը, Հայաստանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտի մասնագետների աջակցությամբ, փորձարկվեցին որպես հանրակրթության բաղադրիչ:

2007թ.-ից «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կիրառվում է դասավանդողի նոր աշխատակարգը՝ 30-33-ժամյա աշխատանքային շաբաթով: Ըստ այդ աշխատակարգի դասավանդողը շաբաթական 18-22 ժամ ուսումնական ծանրաբեռնվածություն ունի, իսկ աշխատաժամանակի մյուս մասն օգտագործում է կրթահամալիրի զարգացման ծրագրով հեղինակային մանկավարժական ծրագրերի մշակմանը: Աշխատաժամանակի այդպիսի կառուցվածքի կիրարկումը դասավանդողներին ստեղծագործական-հետազոտական աշխատանք կատարելու և իրենց ստեղծածը անմիջապես դասարանում փորձարկելու հնարավորություն է տալիս: ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի N380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի (այսուհետ՝ ԿԾ) գերակայություններում նշված է. «Մտավոր կարողության և գիտելիքի վրա հիմնված հասարակության ձևավորում, որտեղ հիմնական շարժիչը գաղափարները և հայտնագործություններն են, և դրանք առօրյա կյանքում ներդնելու ունակություն»: Ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգը ներառել է կրթահամալիրի բոլոր աշխատողներին, մշակվել են վերապատրաստման մոդուլներ հանրապետության հանրակրթական համակարգի աշխատողների համար: Նոր ուսուցիչներով համալրումը կատարվում է մրցութային կարգով, մշակվել են մրցութների կազմակերպման մոդուլներ (մրցութի անցկացման կարգ, ստուգման առաջադրանքների փաթեթ, մրցութի մասնակիցների վերապատրաստում): «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում» ծրագրի շրջանակում, մշակվել, փորձարկվել, հրատարակվել են նախակրթարանի ծրագիրը, 2-6 տարեկանի խաղադարանը, երգարանը, նախադպրոցական հաստատությունների աշխատողների վերապատրաստման մոդուլները, որոնցով միայն 2009թ. հաջողությամբ վերապատրաստվել են հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 400-ի չափ դաստիարակներ, երաժշտության մասնագետներ, վարիչներ և այլ մանկավարժական աշխատողներ:

Կրթահամալիրի կանոնադրական խնդիրներից է ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը, առաջավոր կրթական, այդ թվում՝ կրթահամալիրի հետազոտող մանկավարժների մշակած մոտեցումների ներդրումը: Կրթահամալիրում կատարված մանկավարժական-հետազոտական աշխատանքների արդյունքները տարածելու համար առանձին կառույցի՝ հրատարակչատան ստեղծման անհրաժեշտություն էր առաջացել: Որպես հեղինակային մանկավարժության արդյունք՝ կրթահամալիրի հրատարակչատունը 2009թ. հրատարակել է կրթահամալիրը ներկայացնող 2009-2010 ուստարվա ընդունելության հայտագրերը, «Ուսուցումը կրթահամալիրում. 2009-2010 ուստարի» գրքույկը և նրա

«Ուսուցումը 10-րդ դասարանում» հավելվածը, սովորողների և դասավանդողների ստեղծած մոտ 30 խտասկավառակներ: Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի սովորողները, նրանց ուսուցիչներն ու ծնողները մասնակցում են կրթահամալիրում անցկացվող բաց ստուգատեսներին, ուսումնահետազոտական բաց ճամբարներին, սովորողների օժտվածության զարգացման հեռավար աշխատանքներին, վերապատրաստումներին, կրթահամալիրի փորձի յուրացմանն ուղղված համաժողովներին, հավաքներին, սեմինարներին ու մանկավարժական քննարկումներին: Կրթահամալիրում ստեղծվածի տարածման մյուս ճանապարհը սովորողների և դասավանդողների փոխանակումն է: 2009թ. ավելի քան 300 սովորող և ուսուցիչ բազմօրյա հայրենագիտական արշավների ժամանակ եղել է հանրապետության տարբեր մարզերում և Վրաստանի Թիֆլիս քաղաքում: Կրթահամալիրի հյուրատունը հնարավորություն է տվել ընդունելու հանրապետության տարբեր մարզերի և Վրաստանի մոտ 300 սովորողների և դասավանդողների:

Կարևոր է արտակարգ ունակություններ դրսևորողների հայտնաբերման և նրանց կրթության կազմակերպմանն ուսուցման նոր ձևերի, ծրագրերի, նոր նյութերի մշակման, փորձարկման և հրապարակման հարցը, քանի որ ՀՀ 2010թ. պետական բյուջեով և 2009-2011թթ ՄԺԾԾ-ով զգալի գումար է նախատեսված հանրապետությունում արտակարգ ընդունակություններով սովորողների կրթության և նրանց կրթաթոշակի համար: Կրթահամալիրի բոլոր տարիքի սովորողների ուսումնահետազոտական ճամբարները, սովորողների նախասիրությունների զարգացման ստուգատեսները, հեռավար ուսուցման անընդհատ գործածումը հնարավորություն են տալիս սովորողներին դրսևորելու իրենց նախասիրությունները և ունակությունները: Այդ ստուգատեսների աշխատանքները հնարավորություն են տալիս ընտրելու արտակարգ ունակություն ցուցաբերած սովորողներին: Այդպիսի սովորողների համար կազմվում են առաջադրանքների և էլեկտրոնային ռեսուրսների ժողովածուներ, որոնք կտեղադրվեն կրթահամալիրի կայքում, որպես ենթակայքեր:

2009թ. արդյունքներով կարող ենք փաստել, որ այլընտրանքային (հեղինակային) մանկավարության ծրագրերի նկատմամբ մեծացել է մատուցված ծառայությունների շահառուների (ծնողներ, հանրակրթական դպրոցներ, մասնավոր ընկերություններ և ոչ կառավարական կազմակերպություններ) վստահությունը: 2008թ. համեմատ հեղինակային մանկավարժության ծրագրերով լրացուցիչ կրթական ծառայությունների աճը կազմել է 30%: Աճի այսպիսի դինամիկան կպահպանվի նաև 2011-2013թթ: 2009թ. կրթահամալիրը մասնակցել է «Մայքրոսոֆթի» «Նորարար դպրոց» մրցույթին, դարձել աշխարհի նորարար 30 դպրոցներից մեկը և հոկտեմբերին Բրազիլիայում մասնակցել նորարար դպրոցների հավաքին: Կնքվել է համաձայնագիր «Մայքրոսոֆթի» և կրթահամալիրի միջև: Հեղինակային մանկավարժության ծրագրի իրականացման արդյունքում կրթահամալիրը համատեղ ծրագրեր է նախաձեռնել և իրականացնում իր նոր գործընկերների՝ Մայքրոսոֆթի, Ֆիրմա Ալֆա-ի, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, «Նեյշնըլ ինստրումենտ քորփորեյշն»-ի, «Փուլ» ՍՊԸ-ի, Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, հանրային ռադիոյի հետ: Կրթահամալիրի հետ համագործակցում և ծրագրի իրականացմանն աջակցում են հասարակական կազմակերպություններ (Հավատ, Վորլդ Վիժըն

Հայաստան, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, ԱՄՆ «Հայաստանի զարգացման ծառայություններ» և այլ): 2009թ. հանրապետական ՁԼՄ-ներում եղել են մոտ 50 հրապարակումներ կրթահամալիրի մասին, կրթահամալիրի աշխատողների հոդվածներ, հարցազրույցներ:

2009թ. ծրագրի իրականացման հիմնական ցուցանիշներ

1. Ծրագրի փորձարկման և վերապատրաստման նախակրթարանային 2-5 տարեկանների խմբերի պահպանում կրթահամալիրի կրտսեր դպրոցների կազմում ծրագրի միջոցներով - 8 խումբ, 170 սան, և 5-6 տարեկանների պատեզից դպրոց անցման գիտափորձի խմբերի պահպանում ուսուցողական ծրագրերի ֆինանսավորմամբ - 3 խումբ, 68 սովորող
2. Հանրապետության նախադպրոցական հաստատությունների մանկավարժական և այլ աշխատողների վերապատրաստում - 16 խումբ, 393 մարդ, հանրակրթական դպրոցների դասավանդողների վերապատրաստում հեղինակային մանկավարժության ծրագրերով – 80 ուսուցիչ
3. Թարգմանված և հրապարակված գրքեր (8), պատմվածքներ, այլ հեքիաթներ (ավելի քան 10), մեթոդական մշակումներ և այլ երկրների մանկավարժական փորձը ներկայացնող հոդվածներ (ավելի քան 20), կրթահամալիրի աշխատողների հրապարակած (էլեկտրոնային) մեթոդական մշակումներ և ուսումնական նյութեր - ավելի քան 100, հանրապետական ՁԼՄ-ներում կրթահամալիրի մասին հրապարակումներ և կրթահամալիրի աշխատողների հոդվածներ, հարցազրույցներ – մոտ 50, հրապարակված գրքեր և ուղեցույցներ – 4 անուն, մասնագիտական զարգացման դասընթացների ծրագրեր (մոդուլներ) – 31 դասընթաց կրթահամալիրի կայքի հրապարակված էջերի քանակը՝ մոտ 3200, ենթակայքերի էջերի քանակը՝ ավելի քան 2000, մանկավարժական էլեկտրոնային պարբերականներ (Դպիր, Նախակրթարան) – 2, սովորողների էլեկտրոնային պարբերականներ – 6, հայրենագիտական բազմօրյա արշավներ – 15, ուսումնական ճամփորդություններ – ավելի քան 200, Հանրապետական ստուգատեսներին մասնակցած մեծահասակներ – 3 ստուգատես, 450 մարդ, հանրապետական ստուգատեսներին մասնակցած սովորողներ – 3 ստուգատես, 3200 սովորող
4. Ոչ բյուջետային ներդրումներ հեղինակային մանկավարժության զարգացման համար – 101,602 մլն. դրամ, այդ թվում՝
 - Պայմանագրային վճարներ լրացուցիչ հանրակրթական կրթական ծառայությունների – 80,242 մլն դրամ
 - Պայմանագրային վճարներ լրացուցիչ նախադպրոցական ծառայությունների համար – 13,970 մլն դրամ
 - Այլ ծրագրերի ներդրումներ – 4,803 մլն դրամ
 - Նպատակային այլ ներդրումներ - 2,587 մլն դրամ

3. Ծրագրի գերակայությունները, նպատակները և խնդիրները

2011-2013թթ ՄԺԾ առաջարկի նպատակները, խնդիրները և գերակայությունները 2009-20011թթ ՄԺԾ առաջարկի, 2010թ. «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի շարունակությունն ու զարգացումն են: 2010թ. պետական բյուջեով նախատեսված «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի ծախսային ուղղությունները, որոնք ստորև ներկայացված են, 2011-2013թթ կապահպանվեն: Առաջարկվող ծառայության ոչ ֆինանսական ցուցանիշները 2011-2013թթ աճ կունենան. կավելանան նախադպրոցական խմբերում սովորող երեխաների թիվը, վերապատրաստվող մանկավարժական աշխատողների քանակը, պատանի ստեղծագործողի հեռակա հանրապետական դպրոցի մշտական մասնակիցների թիվը և մշակվող փորձարարական աշխատանքների (տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի) քանակը: Այսպիսի աճի հետ կապված ծախսերը կկատարվեն կրթական լրացուցիչ ծառայությունների ընդլայնման հաշվին, նոր շահառուների և ոչ պետական միջոցների ներգրավմամբ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից, Ավագ դպրոցների ստեղծման ռազմավարական ծրագրից, ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի N380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրից և ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշումով հաստատված «Կայուն զարգացման ծրագրից», կրթահամալիրի 2009-2012թթ զարգացման ծրագրից բխում են նոր գերակայություններ, որոնք ընդգրկված չեն 2009-2011թթ ՄԺԾ առաջարկում և պահանջում են լրացուցիչ ֆինանսավորում 2011-2013թթ ՄԺԾ ծրագրով:

- Պետական այլընտրանքային (հեղինակային) մանկավարժական կրթական ծրագիրը ձևակերպելու և ամբողջացնելու համար անհրաժեշտ է այն ապահովել ուսումնական նոր գրականությամբ: Ծրագրով կապահովվի առարկայական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ուղեցույցների և ուսումնական այլ գրականության, ուսումնական մեդիանյութերի ստեղծումը, փորձարկումը, վերամշակումը և էլեկտրոնային հրատարակումը: Մշակված դասագրքերը կրթահամալիրը կարող է հրատարակել դասագրքերի շրջանառու հիմնադրամում իր հաշվին եղած գումարով:

- Հանրապետությունում այլընտրանքային մանկավարժությունը հայտնի դարձնելու և տարածելու համար պետք է ստեղծել հեղինակային մանկավարժության գործընկեր դպրոցների հայաստանյան ցանցը: Ծրագրի խնդիրներից մեկը կդառնա այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծումը և ուսուցիչների վերապատրաստումը, որը 2009-2011 թթ ՄԺԾ ծրագիրը չէր նախատեսում: «Դպրոցի բարեփոխման պահանջներից ելնելով՝ ծրագրի շրջանակում առաջնահերթ է նաև ուսուցիչների (հատկապես ավագ դպրոցի) շարունակական վերապատրաստումը» (ԿԶԾ, կետ 648): Այս բնագավառում կրթահամալիրի անցած տարիների փորձը, շենքային և տեխնիկական կարողությունները հնարավորություն են տալիս կազմակերպելու դասավանդողների, նաև դաստիարակների վերապատրաստում: Կրթահամալիրի հյուրատան առկայությունը թույլատրում է կազմակերպել նաև վերապատրաստում ՀՀ մարզերի և սփյուռքի դասավանդողների համար:

- Կառավարության 2008թ. ծրագրում նշված է. «Կառավարությունն ապահովելու է համակարգչային հմտություններ և օտար լեզուներ ուսանելը՝ սկսած կրտսեր դպրոցից»: Կրթահամալիրում արդեն մի քանի տարի է՝ փորձարկվում է համակարգչային-մեդիա հմտությունների և օտար լեզուների ուսուցումը առաջին դասարանից սկսած: Այս բնագավառում կրթահամալիրի փորձի ամբողջացումը օգտակար կլինի հանրապետության մյուս դպրոցների համար: Փորձի ամբողջացումը իր մեջ կներառի «Էլեկտրոնային գրատախտակը դասարանում» և «Ուսումնական նոթբուք յուրաքանչյուր ուսուցչի և դասավանդողի համար» ծրագրերի իրականացումը, դրանց համար անհրաժեշտ ուսումնական ծրագրերի, փորձնական ձեռնարկների, այլ ուսումնական նյութերի (նաև էլեկտրոնային) ստեղծումը, դասավանդողների վերապատրաստումների համար մոդուլների կազմումը և վերապատրաստման կազմակերպումը:

- «Քայլեր են ձեռնարկվելու հեռահար (հեռավար) ուսուցման համակարգի ներդրման և դպրոցների էլեկտրոնային ցանցի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ հետապնդելով 2012թ. ապահովել բոլոր հանրակրթական դպրոցների ընդգրկվածությունը հեռահար ուսուցման համակարգում» (ԿԶԾ, կետ 647): Նախորդ տարիներում հեռահար ուսուցումը կրթահամալիրում կիրառվում էր մարզերում սովորողների հետ և առանձնահատուկ դեպքերում անհատական ուսալանով սովորող փոքր թվով երեխաների հետ աշխատելիս (կրթահամալիրում պետական աջակցությամբ իրականացվող «Պատանի հետազոտողի և ստեղծագործողի հանրապետական հեռակա դպրոց» ծրագրի շրջանակում), իսկ 2008-ից փորձարկվում է հեռավար ուսուցումը՝ որպես ստացիոնար ուսուցման մեթոդ, երբ սովորողը և դասավանդողը բացի անմիջական շփումներից հաղորդակցվում են նաև ինտերնետային կապի միջոցով: Իրականացվող մշակումներն օգտակար կլինեն մյուս դպրոցներում կիրառելու համար: Այս աշխատանքի համար կարևոր գործիքներ են նաև ինտերնետ-TV-ն, ինտերնետ-ռադիոն և ըստ ուսումնական բնագավառների ուսումնական ռեսուրսների էլեկտրոնային փաթեթները (կայքեր):

- 2011-2013 թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում կատեղծվեն սովորողների մեջ փողոցային անվտանգ երթևեկության կարողությունների զարգացման լաբորատորիա, անհրաժեշտ ուսումնական միջոցներ և նյութեր:

- Կստեղծվի և կփորձարկվի ինժեներական և տեխնիկական հանրակրթական համակարգ: Կրթահամալիրում ինժեներական-տեխնիկական կրթության տարրերը ներառված են «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության, սովորողների ընտրությամբ խորացված ուսուցման ծրագրերի մեջ: Ուսումնական ծրագրերի, անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծումը բավարար չէ արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար. գործնական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ է նոր նյութական միջավայր՝ նոր լաբորատորիա, տրենաժորներ, համակարգչին միացված թվային անհատական նոր չափիչ սարքեր, որոնք հնարավորություն կտան փորձարարական աշխատանքի հմտությունները հետևողականորեն զարգացնելու: Արդեն երկու տարի է, որ կրթահամալիրն այս հարցում համագործակցում է «Փուլ» ՍՊԸ-ի, «Նեյշնլի ինստրումենտ քորփորեյշն»-ի հետ: Կրթահամալիրի ամենամյա հանրապետական հավաքների և ստուգատեսների ծրագրերով կարևորվում է ինժեներական-տեխնիկական հանրակրթության արդյունքների ամփոփումը և խնդիրների քննարկումը:

2010թ. ծրագրային ծախսեր

Դրամական մուտք տարեկան 94,340.000 դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՅԱԾԻՎ
հազար դրամներով

Ծախսային ուղղությունը	տարեկան ծախս
Ծրագրի սպասարկման, ուսուցողական միջավայրի բարելավման ծրախսեր	9400,000
Այլընտրանքային կրթական ծրագրեր իրականացնող հաստատության պահպանում	20000,000
Ծրագրի նախադպրոցական խմբերի պահպանման ծախսեր	17500,000
Միջազգային և հանրապետական ամենամյա ստուգատեսներ, հավաքներ, այդ թվում`	
Թվային ուսուցման միջոցները արդյունավետ կրթության գործիքներ հունվարյան ստուգատեսի կազմակերպում	1000,000
Չեղիմակային մանկավարժության հեղինակների մայիսյան հանրապետական ամենամյա ստեղծագործական հավաք	1000,000
Յունիսյան մեդիափառատոն	1000,000
Ստեղծագործական-հետազոտական ճամբարներ, սովորողներն նախասիրությունների զարգացման ստուգատեսներ	2600,000
Ուսումնական ինտերնետային TV, լրատվական գործակալություն	3000,000
Ուսումնական մեդիաթատրոն	2000,000
Արտակարգ ունակություններ դրսևորած սովորողների ուսուցում, հեռավար ուսուցում, Live&Edu-ի գործարկում	3000,000
Ծրագրով նախատեսված հետազոտական աշխատանքներ. մշակում և փորձարկում	4500,000
Ուսումնական մեդիանյութերի ստեղծում	3000,000
Վերապատրաստման մոդուլների մշակում և լրամշակում	1500,000
Գործընկեր դպրոցների հայաստանյան ցանցի, այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում և ուսուցիչների վերապատրաստում	6000,000
Հանրապետության նախադպրոցական հաստատությունների աշխատողների վերապատրաստում	6000,000
«Դպիր», «Նախակրթարան» մեդիամասագրերի հրատարակում	3000,000
Մեդիանյութերի հրատարակում	3840,000
«Նոր Դպրոց» մատենաշարի և այլ նյութերի հրատարակում	3000,000
Հայրենագիտական արշավախմբեր	3000,000
Ընդամենը	94340,000

2011, 2012, 2013 թթ լրացուցիչ ծախսերի հիմնավորում

հազար դրամներով

	2011		2012		2013	
	քանակ	անհրաժեշտ գումար	քանակ	անհրաժեշտ գումար	քանակ	անհրաժեշտ գումար
ծրագրերի մշակում						
դասագրքերի մշակում, փորձարկում	5	2500,0	5	2500,0	5	2500,0
դասագրքերի լրամշակում			5	1000,0	5	1000,0
ծրագրերի և մեթոդական ձեռնարկների ստեղծում	5	1500,0	10	3000,0	10	3000,0
ծրագրերի և մեթոդական ձեռնարկների լրամշակում	10	2000,0	15	3000,0	15	3000,0
վերապատրաստման մոդուլների մշակում, փորձարկում	10	1500,0	10	1500,0	10	1500,0
հեղինակային մանկավարժության գործընկեր դպրոցների աշխատողների վերապատրաստում	20	6000,0	30	9000,0	30	9000,0
«Էլեկտրոնային գրատախտակը դասարանում», «Ուսումնական նոթբուք յուրաքանչյուր ուսուցչի և դասավանդողի համար» (էլեկտրոնային ձեռնարկներ)	3	1500,0	6	3000,0	12	6000,0
ինտերնետ-TV, ինտերնետ-ռադիոն, ըստ ուսումնական բնագավառների ուսումնական ռեսուրսների էլեկտրոնային կայքեր (ստեղծում և սպասարկում)	3	4200,0	6	7200,0	9	10200,0
փողոցային անվտանգ երթևեկության կարողությունների զարգացման ուսումնական միջոցներ և նյութեր	10	3000,0	10	3000,0	10	3000,0
ինժեներական և տեխնիկական հանրակրթական համակարգ (ուսումնական նյութեր)	5	1500,0	5	1500,0	5	1500,0

2011-2013թթ ծախսերի ամփոփ աղյուսակ

հազար դրամներով

	2011	2012	2013
Ընդամենը	118040,0	129040,0	135040,0

Կրթահամալիրի տնօրեն՝

Ա. Բլեյան